

ՄԱՏԵՆԱԳՐԱԿԱՆ



ՄՐԲԱՌՕՍՈՒԹԻԻՆ ԱՐԵՒԵԼԵԱՆ ԵԿԵՂԵՑԵԱՑ

ԵՒ ԱՌԱՆՁԻՆ ՀԱՅ ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹԵԱՆ ՄԵՂ

(Տես յ' էջ 358)

Զ



Զհանինք վերջապէս մեր ազգային քրիստոնէութեան պատմութեան մեծ դարապիտոյն, յորում երկու գըլ- խաւոր անձինք կը ներկայանան մեզ. —

Գրիգոր, որուն հնգետասան դարք Լուսա- ւորչի սիրալի անունը կու տան, և Տրդա- տիոս։ Սուրբ կրօնից գէմ անհաշտ ասելու- թեամբ արուած այս կուսոյն մէջ, աշխարհի աշխին համար՝ տարակուսական չէր կրնար համարուիլ վերջնական և որոշիչ ելք։ Թէ ինչպէս իր ամէն ուժովը և կրից ուժգին բռնութեամբ՝ անոր ոտոխ հանդիսացած մեծ և զօրաւոր թագաւորը՝ պիտի յաջողէր ջնջել անհետացնել Գրիգորի մը և խումբ մը առ- կար կուսանաց հաւասարն ու վարդապետութիւն։

Բայց այլ էին խորհուրդք և կամք նա- խախտմութեան, որ անդառնալի և փրկու- թիւնասէր հրամանաւ՝ յառաջգիտութեամբ սահմաններ էր զփրկութիւն հայաստան ազգի և ժողովրդեան։ Երուսաղէմէն ի Գաւառսկոս ճամբուն վրայ կատարուած հին և հրաշալի կերպարանափոխութիւնն, միւս անգամ պիտի նորոգուէր նաև ի մեր երկրի։ յաստուածա- հրաշ լուսոյ և ի շնորհաց շրջած՝ պիտի յաղ- թուէր Տրդատիոս։ և այդ պարտութիւն և անկումն՝ պիտի ըլլար իր մեծագոյն փառքն և յաղթանակ և մեր փրկութիւն։

Սակայն վերջաւան տարի վարած հեթա- նասական մոլեգնակրօնութեամբ թագաւորու- թեան աստին ալ, թէպէտ խիստ հրովար-

տակներովը և իշխանական սասախքն և ապառնալեօք կուտած ժամանակ, չկրցաւ բո- լորովին անհետ ընել զքրիստոնէութիւն մեր աշխարհէն։ և կը գտնուէին՝ ահուզողի մէջ, բայց ջերմեանդն պաշտօնասէրք ի Սիւնիս, ի Վապուրական և յայլ զանազան կողմանս Հայաստանի։

Ո՛րչափ սրտամոխիկ և քաղցրայուշ է Սու- ռենայ որդւոյն՝ սրբոյն թէոպոքի Սալահուն- ւոյ մկայական և անգութ մահը, որ մանկու- թեան անմեղ հասակին՝ աչքն ու սիրտն յեր- կրէ և յերկրաւորաց զատելով՝ մտապիւրու- թեամբ կ'երթար կը խառնուէր՝ Եկեղեցաց զաւառին կողմերը, քրիստոնէութիւնին ծած- կելու համար բացաքնակ եղող ձեացեալ բո- ռոսից խմբի մը հետ, և սրբոյն Գրիգորի հանգիսեւոյ՝ երբ իբր մահապարտ և արքունի իրաց և կրօնից փնասակար՝ կը տարուէր ի վիրապն Արտաշատու, անոր խրատողն ու թիւղբութեամբ՝ Գաւթի մանունով քահանայէ մը կ'ընդունէր զվկրտութիւն, և ապա քաա- նածեայ առողջ, զեղանի և աշխոյժ երիտա- սարդ, նոր Արղշմեն մը, ի սրդոյ և ի ձե- ոաց հօրն կ'ընդունէր զվկայական մահ։

Իսկ երբ Գրիգոր հնգետասանամեայ խա- ւարային բանտի մթութեան և կապանաց մէջ աստուածահրաշ լուսոյ կեանք և ազաւա- թիւն կը պատրաստէր Հայաստան աշխարհի, և Հովսիփմեանք՝ ի հեռաւոր օտարութենէ ի մեր երկիր՝ իրենց քրիստոնէութեան սուրբ

հաւատոց գանձը և կուսութեան զեղափայլ շնորհը ապրեցընել կը փութային, հին աւանդութիւնն կը յիշատակէ թէ Անձեւացեաց գաւառին մօտերը, ուր Բարթոլոմէոս առաքեալը քարոզեց զհաւատոս ճշմարտութեան և կառոյց զՆոգեաց մանս, զեռ եւս կը զրաւնուէին կողմանսն իր քարոզած աւետարանին և վարդապետութեան հետեողք, որք սիրալիւր ընդունելութիւն ըրին փախտական կուսանաց. այլ յերկրւոյ հետամուտ խնդրակացն՝ ստիպուեցան փութալ ճամբայ գնել զիրենք, վերահաս վտանգէն թէ զկուսանս և թէ զանձինս ապահովելով :

Գրիստոնէից այս երկրւոյն կը յայտնէ Տրդատայ և իր համախորհից սպառնալեաց աստակութիւնը, և միանգամայն անոնց թուոյն բազմութիւնն. զի սակաւթիւ խումբ մը նուաճելու և ի միջոյ վերցընելու համար՝ չէր հարկ տալ զափ սառստ և բռնութիւն, ուր չէին կրնար երկիւղ ազդել կոռց պաշտօնասէր Տրդատայ որտին. զի և սա նման Տրայիանոսի, Արեւդիանոսի և Գիօկղէստիանոսի Հռովմայ կայսերաց, որպիսի աշխարհաշէնք և խոհականք ի տեսութեան, և արհաւանք ի մարտոս պատերազմաց, այնչափ անողոր և անզօլթե երեցան ի հալածել զքրիստոնէութիւն, անոր դէմ կռուիլը և անոր հետեողքը ջնջելը՝ նոսրական պարտք մը սեպելով իրենց և հաւատարմութեան հայրենի օրինաց և կարգաց : Մէկէն թագաւորական իշխանութիւն ձեռք առածին պէս, երբ աստուածոց շնորհակալութեան զօր և նուէրներ կը մատուցանէր, իմանալով Գրիգորի քրիստոնէական կրօնից պաշտօնատար ըլլալը, մէկէն մոռնալով անոր ամէն արբիւնքն և այնչափ երկար տարիներու մէջ ցոյց տուած հաւատարիմ ծառայութիւնը, բանտիւ և տանջանօք կը պատահասէր զնա, և կը փութար կրկին և կրկին հրովարտականքով յորդորագոյն առնել զհպատակսն ի շերմեռանդն պաշտօնասիրութիւն աստուածոց. և Արշակունիաց թագաւորութեան մրայ հասած աղէտը, կորստը և ձախողութիւն, քրիստոնէութեան զօրանալովը՝ զից պաշտաման տկարանալուն արդիւնք սեպելով, հեթանոսաց աստելութիւնն ու զայլոյթ կը զրգուր անոնց դէմ. « զի նոքա,

կ'ըսէր, անհնարին խափան լինին զիցն պաշտաման » : որով յայտնապէս կ'իմացուի, թէ իր հօրը խորհուրդու, և անկէ ալ յառաջ, շատ բազմացած էին քրիստոնեայք, և համարձակութիւն առած. ուստի և կրնային համարուիլ խափանիչք հեթանոսական պաշտամանց :

* *

Սակայն յանակնկալս աստուածահրաշ փոփոխութիւն մը կը կրէ նա՝ որ այդպէս խըստիւ կը զրէ, կը հրամայէ և կը գործէ : Հոիփսիմեանք՝ որոց համար կ'աւանդի թէ զքեթէ տասր տարի ամբողջ մեր երկրին սահմանաց և թագստարանաց մէջ պատսպարուելով՝ մերթ ժածկեցին ինքզինքնին, և մերթ ուսուցին փափաքողաց և հետամուտից զլրօսն քրիստոնէութեան, յանկարծ յայտնուելով կը բռնուին մերձ յարքայանիստ ուստանն վաղարշապատու : Վերջին կռուոյ ու մարտի ճգնաժամն էր, ուր կիրք սարսափարշ և մոլեգնակրօնութիւն կը տեսնուին անձնաւորեալ ի սկայագոր արքայն Տրդատէս, և երկնազգեցիկ ոյժ և արիւնքիւն կը զօրացընէ զտկար կուսանն. որ անմահական նախանձելի մահուամբ, կուսագեղ բոսոր արեամբ կը ծնանին ի նոր կեանս զըտվանդակ ժողովուրդ աշխարհին : Ո՛րչափ երախտապարտ պէտք է ըլլանք աստուածախնամ տեսչութեան՝ որ այդ հակառակամարտ շփմանէն, խաւարի ու լուսոյ իրարու դէմ տուած կռուէն, փրկագործ լուսոյ պարզէն ընդունեցանք :

Թագաւորն իր ամէն ուժովն անոնց դէմ կռուելովն՝ ու անշահ մնալէն ետքը, կը հրամայէ մահուան անդաքնական պատուհասիւ յաղթանակել : Սակայն Հոիփսիմեայ յիշատակ՝ արհաւիրք և սարսուտի կ'ազդեն այդ անմեղ արեանց պարտաւոր արքային վրայ : Արքունեաց ճոխութիւն, վայելք, հաճոյք, շեն բաւական ի խաղաղել այդ մրկածութիւն զեալ սիրտը. ամենայն ինչ ամօթելիւր պարտութիւն և պատարանք կը յիշեցընեն նմա : Չի հանգչիր, սրտին և հոգւոյ խաղաղութիւն չի կրնար ձեռք ձգել, մինչև չխոնարհիլ չիյնար անոր առջեւ՝ զոր քիչ յառաջ կենաց և լուսոյ արեգական արժանի չէր համարեր :

իր հոգւոյն կեանքը և մարմնոյ առողջութիւնը իրմէ խնդրելով: Իրեն հետ և բազմութիւն ժողովրդեան կը դիմէ ի հնձանն, ուր դեռ անթաղ և անապական մնացած են այդ սուրբ մարմինք: արքունի հանդերձանօք և բեհեզիք փափաքելով պատել իրենց սրխալի նշխարքը, և ի բարձրագագաթ Մասեաց՝ հրամայելով մեծակոյտ քարինք թաւալել ածել ի վայր, իշխանական զաւազան կրող ձեռաց օժանդակելովը, անոնց պատուոյն և փառաց՝ նուիրական տաճար և հանգստարաններ բարձրացրնելով:

Այսպէս Գրիգոր և Տրդատէս կ'ըլլան առաջինք ի մեծարել և ի պատուել գլխատակ սրբոց, ոչ հալածանաց երեսէն՝ որպէս յառաջն, ի ծածուկ և երկիւղիւ, այլ յայնապէս, և իրենց երկնից մէջ վայելած արժանի երկրաւոր փառօք: Քիչ յետոյ ի գարձին ի Եսեսարիայ, Լուսաւորիչ հետը բերելով զնշխարս սակերաց Յովհաննու կարապետի և ուրիշ սրբոց, այդ նուիրական սրբութեանց առջև կը կործանին կ'իյնան զեռ ևս կանգուն մնացած կռապաշտութեան բազիններն և կուռքեր, և կը հալածուին զունդագունդ զիւսաց բազմութիւնք յԱտիշատ և ի Տարօն, ինչպէս պատմութեան աւանդութիւն՝ հնգետասան երկար դարերէ ի վեր կը հաւատարմացընէ ջերմեռանդն ժողովրդեան սէրն ու մեծարանք:

* *

Բայց երբ Տրդատէս և Գրիգոր՝ Հայաստան եկեղեցին այսպիսի փութով և եռանդեամբ կը հիմնէին, Գալբրիոս և Մարսինոս Հռովմայ կայսերք՝ ամեն հնարաւոր ջանք կ'ընէին հիմն ի վեր տապալել՝ իրենց ընդարձակ իշխանութեան տակ զանուղ աշխարհաց մէջէն այդ աստուածային նախախնամութեան հրաշանշան գործը. և ուր անգութ մոլեգնակոծութեամբ և քաղաքական ու աւօրեայ կենաց շահագիտական սեռակիտով՝ եկեղեցւոյ քրիստոսի բանաւոր հովիւք և հօսք կը վարէին ի ապանդ և ի մահ, սուրբն Գրիգոր ի մեր աշխարհի հարիւրաւորներով եպիսկոպոսաց թիւը կ'անցընէր, և միայն մէկ եօթնեկի համառօտ մի քանի օրուան

մէջ՝ չորս հարիւր բիւր մարդկան՝ Արածանոյ ջրոց մէջ սրբելով և մաքրելով մկրտութեամբ, կը վերընծայէր Աստուծոյ, և հեթանոսութեան անդառնալի աւերակաց վրայ՝ Հայաստան եկեղեցւոյ կեանքն կը հաստատուէ: Երախտագիւտ և շնորհապարտ թագաւոր, նախարարք և ժողովուրդք, երբ ոսկեսանձ արքունական կառք և հայրապետական ոսկեղէն աթոռ կը պատրաստեն նմա և կը ձօնեն, իրենց երկրէն քիչ կամ շատ հեռու՝ իրեք զինաւոր եկեղեցեաց հայրապետք և քահանայապետք, բունաւորաց ռիսութեամբ՝ այդ նուիրական աթոռներէն կը քաշկրրտուին յատեան զաստատանի, և իրենց արեամբն ու մահաւոր փառաւոր վկայութիւն կու տան՝ քահուած, սորվեցուցած ու սիրած հաւատոց ճշմարտութեան: Մարկելլոս քահանայապետ ի Հռովմ, Եպիսկոսոս և Եպիսկոպոս յԱտիշատ, Պետրոս՝ յԱղեքսանդրիա Եպիսկոպոս. ու երբ իրենց՝ ու այսպիսի հովուապետաց հետ, ուրիշ՝ մերձաւոր կամ հեռաւոր քաղաքաց հովիւք՝ մահաւամբ կը նուիրուին իրենց հօտից և հաւատոց վրայ, Անթիպատրոս՝ փ Նիկիոմիդիա, Աթանազիոս՝ ի Պիլաքթովէ, Բասիլիսկոս՝ ի Կոմանա Հայոց, Եղեմէս և Ազատանգելոս՝ յԱնկիւրիա, Տիրան՝ ի Տիրոս, Գրիգոր և Տրդատ հրաւէր կը կարդան՝ եպիսկոպոսաց և քահանայից յունաց և ասորաց՝ զալ հովիւն զՀայաստան ժողովուրդ և աշխարհ. և Նորմիոս ոմն՝ յԵգեական սահմանաց Եփեսոսի՝ Իրփաց աշխարհին առաջնորդութիւնը կը վարէ. Գիմանիոս՝ ի հռչականուն համալսարանէն Աղեքսանդրիոյ, Դրուսայ զաշտին եպիսկոպոս կ'ըլլայ, և Եղիսաբար և Չենոք, ի սրբոյ Լուսաւորէն՝ յաշխարհին Տարօնոյ հաստատուած վանից և ժողովրդեան հոգեւոր տեսուչք կը սահմանուին:

Այսպէս երբ Հայոց վեց հարիւր քսան գաւառաց մէջ անթիւ է յաճախութիւն քրիստոսակոծն ուղղահաւատից և ազատութիւն պաշտաման, « ի շուրջակայ գաւառս փոքուն Հայոց՝ ի մահ վարին նահատակք համարինք, հոգեկիրք, հնազոյն քրիստոնեայք, փառնակ և Հրանա (Որէնդ) հոգեքումբք եղբարքք ի Սատաղա, սահմանապալս Հայոց Մեծաց և

Փոքրունց, ուր և գունդ մի մեկտինացի հա-
զար հարիւր և չորս վկայից նահատակեցան,
Թուսիկ, Մարգար և ընկերքն Եւստու-
տոսեանք յԱրօրակ (305), Ակակ քուրմն և
Հիրենարք դահիճ՝ երկու վկայուհիք ի Սե-
բաստիա մայրաքաղաք Փոքրուն Հայոց: Իսկ
է Եեսարիա՝ ի հոլլա յուրվից՝ քաջն Գոր-
դիոս (303), սքանչելի վկայուհին Դորոթէա
(304), և զոյգ նմին մայրն հրաշալի Թու-
դիտա քաղցրախօսիկ գեւաբուսիկ որդեկան
(304). և ի միտ եւս մայրաքաղաք Երրորդ
Հայոց ի Մեխիտիւնէ, Եւգրեսեանք և Նի-
կանդրեանք (304). ի Նիկոպոլիս Փոքրուն
Հայոց՝ Թանուար և Պեղադիա:

« Իսկ ի հեռագոյն սահմանս Ասիոյ և
յնգիպոտոս, յԱփրիկէ և ի կողմանս Եւրո-
պիոյ, մինչդեռ հազարք հազարաց և բիւրք
բիւրուց ընդ հուր և ընդ սուր ելանէին, ող-
ջոյն Գունդն թերական կոտորէր ի կողոսիա-
Գերմանիոյ, առան հազար և երկերիւր ոգիք՝
մնացորդք բռնաւար շինողաց բազանեացն
Դիոկլետիանոս ի Հռովմ՝ լուցկիք նորին լի-
նէին, երկու բիւրքն ի Նիկոմիդիա՝ ի հըր-
դեհի ապարանիցն և եկեղեցւոյն իւրեանց
յաճիւն դատէին. քաղաք մի ի Փոնդիա,
քանդի քրիստոնեայ էր, բոլորովմբ բնակչօքն
ի քառից անկեանց ի խանձ մատնեալ ի
սպառ հրաճարակ կորնչէր... Իսկ յաշխարհի

մերում՝ ի նախասկիզբն լուսաորութեան՝
քսան բիւր միանգամայն մաքրէին աւազա-
նաւն, և չորս հարիւր բիւրք մարդկան՝ որք
հերու Աստղիկան կաթաւս հարկանէին, այժմ
ի միում եօթնեկի մկրտեալք ի յորձանս Ա-
րածանոյ, կուսածնին Աստուծոյ երկիր պա-
գանեն. բանակ բազմազունդ քան զՔսեր-
քսեայ և զՍկիւթաց, մեծազօր քան զԵսաւ,
որբազումար իբրեւ զսերովբէս: Երկինք երե-
ւէին յայտնապէս փայլեալ ի Հայոս. դժօրք՝
պաւակից կայսերաց՝ շուրջ զՀայովք՝ 1 :

* *

Այդ աստուածանուէր զոհք, երկնընծայ և
երկնահաճոյ յաղթանակք, եթէ անմահական
կեանաց անզրաւ փառացը մէջ պիտի ունե-
նային հրեշտակաձայն անլուելի զովութիւն և
զրուատիք, ինչպէս ընդհանուր քրիստոնէու-
թեան, առանկ ալ հայկական եկեղեցւոյ մէջ՝
պիտի ունենան իրենց զարմացողքը, գովա-
բանքը և կենսագիրքը: Այս է որ մեր եկե-
ղեցւոյն սրբախօսական մատենագրութեան կը
հրաւիրէ զմեզ:

1. Հ. Ալիշան վարդապետի, անտիպ եր-
կասիրութենէ մը:

